57. Մեծ գավթի աե կողմի հս սյան բնի վրա, խաչի կողքերին

(Լուս. № 48)

ԺԳ դար

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Սբ նշան*
2 *տրունա-*
3 *կան ...ռ...ին լեր քաւարան։*

Մանոթություն.— *Անձնանվան գրերը խիստ մաշված են և չեն կարդացվում։*



Նկ. 48. Արձ. № 57։

58. Մեծ գավթի հս աե անկյունին։ Արձ. ձախ մասը փորագրված է հս պատին, իսկ աջը՝ աե

Հ ՈՀԸ Մ 1229

Հրատարակված է՝ Ջալ 25, Վիմ 66

1 *Ի թուիս ՈՀԸ։*
2 *Ես՝ Մամախաթուն, ամուսին Վաչէի,*
3 *եատ զիմ գանձագին ձիթահանքն յԱնի զԻշ-*
4 *խանի ակն յԱծածինս։ Որ մեր յիշատակի աւրն*
5 *սե(ղ)անն ի մեր յանուն լինի. սբ Գորգն աւր յիմ*
6 *անուն եւ յեգն կիրակէն՝ Վաչէի։ Ով խափանէ, մեր խղ-*
7 *ճին տէր է առաջի Այ։ Ես՝ Գրիգոր վարդապետ, առ-*
8 *աջնորդ սբ ուխտիս եւ միաբանքս հաստատեցաք։*
9 *Զունի ոք հրաման խափանել։*

Մանոթություն.— *1.* Իշխանի ակը *Անիի տեղամասերից մեկն է, որտեղ գտնվել է նվիրատուի գանձագին ձիթահանքը։*

2. 6-րդ տողում յեգն *բառը տառասխալով է, պետք է կարդալ* յեկն *(գալիք, եկող)։*

3. սբ Գորգն աւր *պետք է կարդալ՝* Սուրբ Գեորգի օրը։

Տարընթերցում.— *1.* Ջալ *թվականը գրել է* ՈՀԲ *(1223) այն էլ արձանագրության վերջում։*

2. յԱնի զիշխանի ակն Ջալ *բաց է թողել։*

3. Ջալ *բաց է թողել նաև տոների անունները, Վաչեի անունը և այլն։ Մյուս մասերը խմբագրել և փոփոխել է. օրինակ՝* Զունի ոք հրաման խափանել, *գրել է՝* մի ոք իշխեսցէ խափանել։